## ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՍՅԱՆ 26 / 1 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

### ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Սույն աշխատանքային նախագիծը մշակվել է Արարատի մարզպետարանի պատվերով` մարզպետարանի և «Տեխշին» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի և Վեդիի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի, մեր կողմից ուսումնասիրվել է Վեդի քաղաքի Կասյան 26 / 1 շենքի տանիքի փաստացի վիճակը:

Համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի, աշխատանքային նախագծով մշակվել է հետևյալը.

- Վեդի քաղաքի Կասյան 26 / 1 շենքի տանիքի փայտե կոնստրուկցիաների և տանիքածածկույթի քանդման ու վերանորոգման աշխատանքներ` նոր փայտանյութով և նոր տանիքածածկույթով:

Հարկ է նշել, որ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ վերը նշված տանիքի փայտե կոնստրուկցիաները մասամբ քայքայված են, բացակայում են հակահրդեհային և հականեխիչ ծածկույթները: Փայտե կոնստրուկցիաների միջև հեռավորությունները և անհրաժեշտ քանակը (կանգնակներ, թեքաններ, ծպեղնառտքեր, կավարամած և այլն) տեղադրված է տանիքածածկույթի իրականացման շին. նորմերին և կանոններին անհամապատասխան: Գոյություն ունեցող փայտյա կոնստրուկցիաները ուղղանկյուն և անկանոն կտրվածքի են, հիմնականում ոչ փշատերև անտառանյութից:

Երկարատև շահագործման հետևանքով կան փայտե կոնստրուկցիաներ որոնք կորցրել են իրենց պիտանելիությունը: Կավարամածը իրականացված է 100x20 չափերով տախտակներց` 600-700 մմ միջտախտակային հեռավորությամբ: Տանիքածածկույթը ազբոհերձաքարից է, մասամբ քայքայված, մասամբ էլ ջարդված: Ձեղնահարկում բացակայում է անհրաժեշտ հաստության և մակերեսի խարամի շերտը: Նախագծով նախատեսված է փայտե կոնստրուկցիաների փոխարինում նոր փայտանյութով, հականեխիչ և հակահրդեհային միջոցառումների իրականացում, նոր տանիքածածկույթի տեղադրում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից ŭ = 0.55մմ, ինչպես նաև ջրհավաք ճոռերի, ջրընդունիչ ձագարների և ջրթող խողովակների տեղադրում: Հարկ է նշել, որ նոր տանիքածածկույթն իրականացնելիս գոյություն ունեցող փայտանյութից կառանձնացվի պիտանի փայտե կոնստրուկցիաներ, որոնք կենթարկվեն համապատասխան մշակման և կօգտագործվեն որպես հենատափաստ, կանգնակ, մարդակ, հորիզոնական կապ և ծայրակցորդ:

Տանիքի ապամոնտաժումը սկսելուց առաջ անհրաժեշտ է տարանջատել անվտանգության գոտիները, բացառել կողմնակի անձանց մուտքը շին. հրապարակի տարածք, ամբողջությամբ հոսանքազրկել շին. հրապարակի տարածքի բոլոր էլեկտրական գծերը, ապամոնտաժման աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց անցկացնել անվտանգության կանոնների դասընթաց:

Շինարարական աշխատանքներն իրականացնել լիցենզավորված կազմակերպությունների միջոցով:

- Պահանջվող լիցենզիա` բնակելի, հասարակական և արտադրական:
- Պահանջվող մեքենա մեխանիզմներ` ավտոկռունկ 1 հատ, բեռնատար մեքենա 1 հատ:

Օգտագործվող շինարարական նյութերին ներկայացվող պահանջներ` երաշխիքային ժամկետ 10 տարի:

Նախագծում ներկայացված են լուսանկարներ գոյություն ունեցող տանիքի փաստացի վիճակի վերաբերյալ:

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՍՅԱՆ 26 / 1 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ





«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ
2015Թ.


# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՍՅԱՆ 26 / 1 ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ


ՏՆՕՐԵՆ` Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ն.Գ.Ճ.` Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է`
ՎԵԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ


«ՏԵԽՇԻՆ» ՍՊԸ
2015Թ.